ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-14-1-11/9 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի օգոստոսի 25-ին կնքված ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-14-1-11/9-1 պայմանագրում 2014թ-ի հոկտեմբերի 06-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքը մատակարարվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով 06.10.2014թ. կնքվել է համաձայանագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 700 651:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
25.08.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-14-1-11/9-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «05» հոկտեմբերի 2014թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «ՏԻՍԱ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Ի.Հակոբջանյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.08.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-14-1-11/9-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Կողմերը որոշեցին Պայմանագրի 9.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:
1.2. Սահմանել, որ Գնորդը պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ՏԻՍԱ» ՓԲԸ
Ք.Երևան, Մ.Ադամյան-1	ք. Երևան, Նորագավիթ 4փ
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 90032661
Հ/Հ 900011013741	Հ/Հ 16048234732700
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«ՏԻՍԱ» ՓԲԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ի.Հակոբջանյան**

Հավելված
Հաստատված է
«25» օգոստոսի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-14-1-11/9-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ.պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում									
		մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Ուղղահայաց շերտավարագույր	5122							4 227 000	4 227 000	4 227 000	**4 227 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք.Երևան, Մ.Ադամյան-1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011013741
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Արզումանյան

ՎԱՃԱՌՈՂ
«ՏԻՍԱ» ՓԲԸ
ք. Երևան, Նորագավիթ 4փ
ՀՎՀՀ 90032661
Հ/Հ 16048234732700
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ի տնօրեն՝
Ի.Հակոբջանյան